

Արեն Մ. Սանթրոյան

Բանասիր. գիյր. թեկնածու

Նազիկ Գ. Հովհաննիսյան

Բանասիր. գիյր. թեկնածու

ԶՈՒԳԱԲԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Բանալի բառեր – լծորդություն, բայակազմություն, տարակազմ, տարակերպ, տարածանց, կաղապար, բաղադրիչ, կանոնականություն, բառային արժեք, դասակարգում:

Մուտք

Հայերենի բայական հարադրությունները, այդ թվում և զուգաբայական հարադրությունները լեզվաբաններն ուսումնասիրել են հատկապես իմաստային տեսանկյունից: Հարցին անդրադարձել են Ա. Այտընյանը¹, Հ. Աճառյանը², Ս. Ղազարյանը³, Մ. Աբեղյանը⁴, Ա. Աբրահամյանը⁵, Հ. Բարսեղյանը⁶, Է. Աղայանը⁷, Ա. Մարգարյանը⁸, Գ. Սևակը⁹, Վ. Առաքելյանը¹⁰:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 06.06.2024:

¹ Տե՛ս Այտընյան Ա. Հ., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, հանդերձ ներածությամբ եւ յաւելուածով, Վիեննա, Միսիթարեանց տպ., 1866, էջ 117, 259: Զալլիսեան Վ. Հ., Քերականություն հայկազեան լեզուի, հանդերձ փոփոխմամբ եւ յաւելուածովք աշխատասիրեալ ի Արսէնէ Վ. Այտընեան, Վիեննա, Միսիթարեան տպ., 1885, էջ 398-399, 433-434:

² Տե՛ս Աճառյան Հ. Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. IV, Ա գիրք, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 393: Աճառյան Հ. Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հատ. IV, Ա գիրք, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., հատ. IV, Բ գիրք, Եր., 1961, էջ 437:

³ Տե՛ս Ղազարյան Ս. Ղ., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., ԵՊՀ հրատ., 1954, էջ 172:

⁴ Տե՛ս Աբեղյան Մ. Խ., Հայոց լեզվի տեսություն, Եր., «Միտք» հրատ., 1965, էջ 173-174:

Ջուգարայական հարադրությունները նախապես առանձին բայեր չեն համարվել. առաջին բաղադրիչը (հիմնականում *կալ, նստել, անցնել, գալ, երթալ* բայերը) դիտվել է ավելադրություն, որը սաստկացրել է («գորացրել») մյուս բայի իմաստը:

Մ. Աբեղյանից սկսած՝ զուգարայերն արդեն առանձին բայեր են դիտվում («երկու կից բայերն ասվում են իբրև մեկ բայ»), որոնց բաղադրիչների միավորումը կատարվում է անհրաժեշտաբար և իմաստային-քերականական և արտասանական հանգամանքներում¹¹:

Մ. Աբեղյանը, Ա. Մարգարյանը բայական հարադրություններ են համարում նաև անորոշ դերբայով և *դալ* բայով կազմված վերլուծական պատճառական բայերը: Մինչդեռ, ինչպես իրավացիորեն նկատվել է, *ասել դալ, խոսել դալ* և նմանատիպ բաղադրությունները պատճառական բայերի վերլուծական կազմություններ են, իրենց քերականական բովանդակությամբ և գործառությամբ նույնանում են *-ցն-* պատճառականակերտ ձևային, ձևաբանական կառույցներ են (լիակատար քերականական հարադրություններ) և պետք է քննվեն ձևաբանության մեջ¹²:

Հայ լեզվաբանները կատարել են նաև զուգարայական հարադրությունների քննություն՝ ըստ բաղադրիչների իմաստային առնչակցության: Ըստ այդմ նշվում է, որ զուգարայական հարադրությունների բաղադրիչները կարող են կազմված լինել հոմանիշ բայերից (*թոշնել-թառասնել*), մերձիմաստ բայերից (*ասել-խոսել*), միմյանց զուգորդող գործողություն ցույց տվող բայերից (*ուտել-խսել*), հաջորդական գործողություն ցույց տվող բայերից (*առնել-փախչել*), հականիշ բայերից (*գնալ-գալ, առնել-ծախել*) և այլն¹³: Ասվածից պարզ է, որ բոլոր բայերն անխտիր չեն կարող

⁵ Տե՛ս Աբրահամյան Ա. Ա., Բայը ժամանակակից հայերենում, Եր., ՀՄՍՌ ԳԱ հրատ., 1962, էջ 190-198:

⁶ Տե՛ս Բարսեղյան Հ. Խ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., ՀՄՍՌ հեռակա մանկավարժական ինստիտուտի հրատ., 1953, էջ 322-326:

⁷ Տե՛ս Աղայան Է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., ԵՊՀ հրատ., 1984, էջ 223-226:

⁸ Տե՛ս Մարգարյան Ա. Ս., Հայերենի հարադիր բայերը, Եր., ԵՊՀ հրատ., 1966, էջ 279-393:

⁹ Տե՛ս Սևակ Գ. Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., ԵՊՀ հրատ., 1955, էջ 162-163:

¹⁰ Տե՛ս Առաքելյան Վ. Գ., Հայերենի շարահյուսություն, հատ. I, Եր., ՀՄՍՌ ԳԱ հրատ., 1958, հ.1, էջ 114:

¹¹ Տե՛ս Աբրահամյան Ա.Ա., նշվ. աշխ., էջ 190:

¹² Տե՛ս և հմնտ. Աբրահամյան Ա.Ա., նշվ. աշխ., էջ 198: Աղայան Է. Բ., նշվ. աշխ., էջ 226:

¹³ Տե՛ս Աղայան Է. Բ., նշվ. աշխ., էջ 224: Աբրահամյան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 192-198: Մարգարյան Ա. Ս., նշվ. աշխ., էջ 327-338:

հարադրվել իրար և կազմել գուգադրական բայեր, ինչպես, օրինակ, *քնել-նսրել, պատկել-վազել* բայերը, որոնց ցույց տված գործողությունները չեն կարող անմիջական սերտ կապ ունենալ և ըմբռնվել իբրև մի ընդհանուր հասկացություն:

Իրավացիորեն նկատվել է նաև, որ ոչ բոլոր գուգաբայական հարադրություններն ունեն բառային (բառույթային) արժեք: Այսպես՝ Ա. Աբրահամյանն ընդգծում է, որ «գուգաբայական հարադրությունները բայական հարադրությունների բոլոր տիպերի շարքում, իբրև բառային միություններ, իմաստային կապի տեսակետից մեծ մասամբ չափազանց թույլ և հեղհեղուկ են: Նրանց առանձին ենթատեսակներ դեռ որոշ չափով ունեն շարահյուսական հանդիպադրումների բնույթ և լիովին չեն ստացել կայուն բառույթների նշանակություն, մի տեսակ միջին տեղ են գրավում շարահյուսական կապակցությունների ու բառույթների միջև: Բայց նկատի ունենալով դրանց միավորվածությունը և զարգացման հեռանկարները՝ ըստ համապատասխան առնչումների նշվում են հարադրությունների շարքում: Սրանցից միայն որոշ ենթատեսակներ բուն իմաստով ամբողջական բառույթի իմաստ ունեն»¹⁴:

Նկատվել է նաև, որ գուգաբայական հարադրությունները քայքայվում են, երբ նրանց բաղադրիչ մասերը միավորվում են *և, ու* շաղկապներով¹⁵: «Անվիճելիորեն, – գրում է Ա. Մարգարյանը, – առանձին բառային արժեք ունեն միայն այն գուգադրական բայերը, որոնց բաղադրիչ մասերը, հեռանալով իրենց բուն նշանակությունից, դրանցից տարբեր, մի նոր և ավելի ընդհանուր նշանակություն են արտահայտում: Բայց այդպիսի բայերը գուգադրական բայերի մեջ առանձնապես մեծ թիվ չեն կազմում, և հետևաբար երկու (և երկուսից ավելի) գործողության նշանակություններ միասնաբար արտահայտելը այն հիմնական, էական ու բնորոշ առանձնահատկությունն է, որով և պայմանավորված են նրանց դրսևորումները»¹⁶:

Է. Աղայանը նույնպես գուգադրական բայական հարադրությունների էական (բնութագրական) կողմը համարում է այն, որ դրանք ցույց են տալիս միմյանց հետ գուգադրվող գործողությունների միասնություն, այսինքն՝ երկու (երեք) գործողություններ դիտվում են իբրև մեկ միասնական գործընթաց: Հեղինակը տարբերում է գուգաբայական հարադրությունների երկու տեսակ՝ ազատ (փոխարկելի) և կայուն հարադրություն-

¹⁴ Տե՛ս Աբրահամյան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 197–198:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 191:

¹⁶ Տե՛ս Մարգարյան Ա. Ս., նշվ. աշխ., էջ 296:

ներ: Ազատ հարադրությունների առաջին բաղադրիչը փոխարկվում է նույն բայի անորոշ դերբայի գործիական հոլովածնով, և հարադրությունը վերածվում է լրացական կապակցության. դրանք կազմվում են ըստ խոսողի (գրողի) ցանկության կամ ըստ խոսքային իրադրության և բառարաններում չեն արձանագրվում: Մինչդեռ երկրորդ կարգի (կայուն) գուգաբայական հարադրություններն ունեն փոխաբերական իմաստ, չեն կարող փոխարկվել լրացական կապակցության, ունեն բառային արժեք և ընդգրկվում են բառարաններում¹⁷:

Բաղադրիչների իմաստային կապից բացի, լեզվաբաններն ուշադրություն են դարձրել նաև բաղադրիչների բայաստեղծին, դրանց փոխհարաբերությանը:

Ջուգաբայական հարադրություններ են կազմվում ոչ միայն համասեռ բայերի համադրությամբ՝ ա) ներգործական (*առնել-բերել, բերել-դնել, գտնել-բերել*), բ) չեզոք (*իջնել-բաձրանալ, հեռանալ-գալ, անցնել-ընկնել*), գ) կրավորական (*քաշվել-փարվել, գնվել-վաճառվել*), այլև տարբեր սեռերի բայերի համադրությամբ՝ ա) չեզոք և ներգործական (*գալ-տեսնել, վեր կենալ-բերել, գնալ-բերել*) և բ) ներգործական և չեզոք (*առնել-փախչել, վեր առնել-գնալ, շինել-նստել*): Ընդ որում, դրանք արտահայտում են երկսեռ նշանակություն, որի մեջ գերիշխողը ներգործականությունն է¹⁸:

Այսքանով հանդերձ՝ գուգաբայական հարադրությունների քննությունը ըստ բաղադրիչների լծորդությունների, բաղադրիչների կազմության (բայածանցների բայակազմական դերի), բաղադրիչների կերպի և բաղադրիչների ու կանոնականության (կանոնավորության ու անկանոնության)՝ կատարված չէ: Մինչդեռ գուգաբայական հարադրությունների (գուգաբայերի) ամբողջական քննության համար սրանք խիստ կարևոր հարցեր են՝ հատկապես գուգաբայերի՝ բառային արժեքի գնահատման տեսանկյունից:

¹⁷ Տե՛ս Աղայան Է. Բ., նշվ. աշխ., էջ 225–226: Հմնտ. *գնալ-գալ* «երթնեկել, ելումուտ անել», *առնել-ծախել* «առնտուր անել, առևտրով զբաղվել», *գրել-կարդալ* «սովորել, ուսանել», *ուրել-խմել* «կերովում անել, խրախճանալ», *փալ-առնել* «խոսքակրիվ անել», *եփել-թափել* «տան գործերը կատարել»:

¹⁸ Համասեռ բայերի հարադրությամբ կազմված գուգադրական բայերի մեջ կրավորական սեռի բայերից կազմվածները առանձնապես մեծ թիվ չեն կազմում և հազվադեպ են: Դա պայմանավորված է գուգադրավոր բայերի բնույթով ու էությամբ և գլխավորապես այն բանով, որ նրանք կոչված են ավելի շատ ակտիվ, քան պասիվ գործողության նշանակություն արտահայտելու: Չեզոք-կրավորական, կրավորական-չեզոք, ներգործական-կրավորական, կրավորական-ներգործական բնույթի գործողությունները իրապես չեն կարող կապակցվել տե՛ս Մարգարյան Ա. Ս., նշվ. աշխ., էջ 344–345:

Մինչ դասակարգումներ կատարելը և կադապարներն առանձնացնելը հարկ է ընդգծել մի քանի կարևոր հանգամանք. եթե զուգաբայական հարադրությունները իմաստային տեսանկյունից միավորվում են նույն խմբում, ապա վերոբերյալ դասակարգումների դեպքում կհայտնվեն տարբեր խմբերում: Կամ հակառակը. տարբեր իմաստային խմբերում ներառված բայերը տեղ կգտնեն, օրինակ, կառուցվածքային նույն խմբում: Մյուս կողմից՝ ըստ լծորդների դասակարգելիս նույն խմբում հայտնված բայերը մեկ այլ հիմունքով (օրինակ՝ ըստ կազմության) դասակարգելու դեպքում կբաշխվեն տարբեր խմբերում¹⁹:

1. Զուգաբայական հարադրությունները՝ ըստ բաղադրիչների լծորդությունների (խոնարհիչների)

Զուգաբայական հարադրություններն այս սկզբունքով դասակարգելիս հնարավոր է չորս կադապար:

1.1. Զուգաբայեր, որոնց երկու բաղադրիչներն էլ ա լծորդության բայեր են (Ա + Ա կադապար)²⁰՝ *գնալ-գալ, վեր կենալ-գալ, վեր կենալ-*

¹⁹ Զուգաբայական հարադրություններ չեն դիտվել ու չեն քննվել՝ ա) նույն բայի կրկնությանը կազմված ձևերը, ինչպես՝ *քաշի հա քաշի, կեր հա կեր, փուր թե կրաս շան ճակարհին* (բայց ոչ *քաշել-քաշքշել, փաշել-փաշքշել*), բ) նույն բայի դրական և ժխտական ձևի զուգորդումները, ինչպես՝ *լինում է-չի լինում, կա-չկա, ունեն-չունեն, այսօր կամ վաղը չկամ*: Ըստ կարգի՝ ժխտական խոնարհման ժամանակ չ-, մի մասնիկները գործածավում են բարդությունից առաջ, ինչպես՝ *Հեղեղները դիակս չքշեն փանեն*: Եվ *մի քաշվեք կարկամեցեք*: Այսինքն՝ երկուսը միասին ընկալվում են որպես մեկ միասնական գործողության ժխտում: Մինչդեռ նկատվել է օրինակ, որում ժխտական մասնիկ է ստանում երկրորդ բաղադրիչը՝ *Բայց քանի որ անում-չէր գնում, փան շունչը փանապարիկ ծանրանում էր* (ՎՍՁ, 14): Բնականաբար, զուգաբայական հարադրությունը չի կարող համարվել ժխտական խոնարհման. երկրորդ՝ ժխտական բաղադրիչով բայը ցույց է տալիս սպասելի, բայց չկատարված գործողություն և կարող է փոխարինվել այլ բայով. հմմտ. *անում-մնում էր*: Նմանատիպ կառույցները մանրամասն կքննվեն հետագայում:

Քննությունից դուրս են մնացել երկուսից ավելի բաղադրիչ ունեցող (բազմաբաղադրիչ) զուգաբայական հարադրությունները (հմմտ. *ուրել-խմել-քեֆ անել, ուրել-խմել-պտուկել-քնել*): Բայց նման բայերի համար նույնպես կարող են բնութագրական լինել *փարասեռ, փարակազմ, փարալծորդ, փարականոն, փարակերպ, փարածանց* եզրույթները:

²⁰ Նախ բերվում են Ա. Աբրահամյանի և Ա. Մարգարյանի աշխատությունների օրինակները, որոնք քաղված են 19-20-րդ դարերի հայ գրողների երկերից, ապա բնագրային օրինակներ ժամանակակից հայ գրականությունից (ավելի ուշ շրջա-

գնալ, քարանալ-մնալ, գոռալ-ճչալ, եռալ-զեռալ, լալ-սգալ, խղճալ-գթալ, դողալ-դողդողալ: Եթե որևէ մեկը ասեր նրան, որ պետք է անհանգստանալ, **գնալ իմանալ** Արիսի մասին, նա անպայման կաներ այդ բոլորը (ԱԱԵ, 47):Արմինուար էլի **քարանում-մնում էր** շար անպարեհ րեղում (ԱԱԵ, 258): Տեղիների **զարմացած-վախեցած** հայացքների րակ ներքև իջավ (ՎՊԸԵ 1, 35): Դարբնոցը **գնալ-մնալու** րեղ չուներ (ՎՊԸԵ 1, 196): Անհարզելի **շուռ գալ գնալը** խմբագրի ուժերից վեր էր (ՎՍԶ, 187):Առավորից մի ռուբլի **տալիս գնում էր** (ՎՍԶ, 234): Ես երկու օր **գնում-գալիս էի** Արաքսի ափով (ՎՍԶ, 286):

1.2. Ջուգարայական հարադրություններ, որոնց առաջին բաղադրիչը՝ **ա**, երկրորդ բաղադրիչը **ե** լծորդության բայեր են (**Ա + Ե** կաղապար)՝ **գալ-բերել, գալ-վերցնել, գնալ-րեանել, գնալ-քնել, երթալ-որոնել, վեր կենալ-րեանել, վեր կենալ-փախել, բարձրանալ-իջնել, բարձրանալ-հասնել, գոլորշիանալ-ցնդել**: Նրանք երբեմն բոլորը միասին **գալիս լցվում էին** փոքրիկ սենյակը (ԱԱԵ, 46): Ինքը պիտի կարողանա **դիմանալ-սպրել** (ՎՊԸԵ 1, 173): Երկու կողմերում **քարացած-կանգնած էին** կիսարիսների շարքերը (ՎՊԸԵ 2, 575): Սակավախոսի նրա **տարացող-սառչող** բարկությունը նրան թվում էր ծիծաղի նույնքան արժանի.... (ՀՄԸ 1, 47): Եվ առջևի ուրբը **երևում-կորչում, երևում-կորչում էր** քանդվող-սարքվող խաչվածքների մեջ (ՀՄԸ 1, 54): Պարերագմից նրանք իրենց **իմացած-ձանկիած** տղամարդկանց եր չարացան (ՎՍԶ, 264):

1.3. Ջուգարայական հարադրություններ, որոնց առաջին բաղադրիչը՝ **ե**, երկրորդը՝ **ա** լծորդության (խոնարհման) բայ է (**Ե + Ա** կաղապար)՝ **թռչել-գալ, թռչել-սլանալ, փախել-գնալ, անցնել-հեռանալ, անցնել-գնալ, ցամաքել-չորանալ, գրել-կարդալ, աձել-գորանալ, անցնել-դառնալ, առնել-գնալ, քշել-գալ, սպշել-զարմանալ, չքվել-անհետանալ, րանջվել-ջանալ, սպրել-զգալ, ծնվել-մեծանալ, սրվել-բթանալ**: Սկզբում **այրված-մերկացած** ծառ թվաց.... (ԱԱԵ, 133): -Ես **կփախչեմ-կգնամ** րնից (ՎՊԸԵ 1, 44): Բայց իր հոգում **մարել-մոխրացել էր** մի բան.... (ՎՊԸԵ 1, 69):Եվ նրանց հառաչանքն **արձագանքվեց-մնաց** մեր երգերի մեջ (ՎՊԸԵ, 5): Կինն էլ ափսեմն ձեռքին **է պելվել-մնացել** (ՎՊԸԵ, 25): Նա այնտեղ **սակվել մնացել էր** (ՀՄԸ 1, 134):Երեսով մեկ ամբողջ պեպենը **կարմրեց-սևացավ**.... (ՀՄԸ 2, 61): Նա հիշեցնում էր սկներենի-նուկերենի **փորձված-ջնացած** խանութպա-

նի հեղինակների երկերից): Դրանով ընդգծվում է Ջուգարայական հարադրությունների կենսունակությունը:

նուրի (ՎՍՁ, 187): Իմ պարագային նրա **լսած-խնացածը** սուր դուրս եկավ (ՎՍՁ, 252):

1.4. Զուգաբայական հարադրություններ, որոնց երկու բաղադրիչներն էլ և լծորդության (խոնարհման) բայեր են (և + և կաղապար)՝ *բերել-հասցնել, ելնել-կանգնել, ընկնել-կանգնել, ընկնել-կուրրվել, ընկնել-սարկել, գրնել-բերել, շոշափել-գրնել, պոկել-փանել, պառկել-քնել, խփել-ծակել, հանել-շարքել, քշել-փանել, պոկել-շարքել, փախչել-թաքնվել, ասել-խոսել, խառնել-խձձել, կապել-կաշկանդել, շաչել-շառաչել, ուրել-խմել, երգել-պարել, վարել-ցանել, փանել-բերել, թողնել-անցնել, կտրել-անցնել, ձաքել-ձաքձքել, աղաչել-պաղապրել, թոշնել-թառամել, պառկել-քնել, քշել-փանել, մրնել-փեանել, անցնել-փեանել, թռչել-կորչել, թռչել-հասնել, վազել-ընկնել, առնել-ուրել²¹, առնել-ծախել, առնել-թռչել, առնել-փախչել, փանել-սարկցնել, աղաչել-պաղապրել, աղել-մաղել, գերվել-փարվել, զուգվել-զարդարվել, լիզել-լպարել, կռել-կոփել, հավվել-մաշվել, պահել-պահպանել, ջարդել-փշրել, լցվել-թափվել, ուռչել-կապրել, պոկվել-ընկնել, բացվել-փակվել: ...Ձեռքը թաքուն ու բացեիբաց **փարել-հասցրել էր** Եվայի կրծքի փակ (ԱՄԵ, 39): Հակորը **բացապրեց-լուսավորեց** դրսից եկած հայուհուն (ԱՄԵ, 54): Գնդացիորը մի քիչ **քանդենք-հավաքենք** (ՎՊԸԵ 1, 257): ...**Հորինում-սարքում են** այդ կյանքը (ՎՊԸԵ 2, 574): Հողից **քրքրեց-հանեց** քարերը (ՎՊԸԵ, 5): Ո՞ր քաղաքացու **հագած-կապած** երեխային է փեանել ու նախանձել (ՀՄՀ 1, 292): Նախձավանի խորշակ է փչում, **կխփի-կխարկի** արտ ու արոտ... (ՀՄՀ 1, 353): Գործկոմի նման մարդուն **փաթաթել կոխել է** խոզանոցները (ՀՄՀ 2, 47): Թող իրար **կուրորեն-թալանեն**՝ իր գործը չի (ՎՍՁ, 46): ...Մինչև անգամ **աղալում-սանրում է** ձաղապը բոլորող ցանցառ մագերը (ՎՍՁ, 110):*

2. Զուգաբայական հարադրություններ՝ ըստ բաղադրիչների կազմության (ըստ բայածանցների՝ բայակազմության մեջ ունեցած դերի)

Զուգաբայական հարադրություններն այս սկզբունքով դասակարգելիս հնարավոր է չորս կաղապար:

²¹ Առնել բայը զուգաբայերում ունի և՛ «գնել» նշանակություն (Հաց կառնել-կուրել ձեռք ընկած փեղում), և՛ «վերցնել» նշանակություն (Առավ-թռավ անպարը):

2.1. Զուգաբայական հարադրություններ, որոնց երկու բաղադրիչներն էլ պարզ (աններածանց) բայեր են. դասակարգումը ըստ ենթաշերտերի է՝ հաշվի առնելով նաև նախորդ՝ ըստ լծորդությունների դասակարգումը:

2.1.1. Առաջին՝ Ա + Ա կաղապարի բայեր՝ *գնալ-գալ, գալ-գնալ, գոռալ-ձչալ, եռալ-գեռալ, լալ-սգալ, իղձալ-գթալ, ... Գնացք է գալիս գնում, ավրո է պարահում* (ՀՄՀ 1, 187): *... Գնացեք գիրք կարդացեք – թրխկ-շրխկ* (ՀՄՀ 1, 375): *... Հարևանների հեր գնալ-գալ ունենային...* (ՎՍԶ, 91): *Ով փեղ չունեք, ... առավորից մի ռուբլի փալիս գնում էր* (ՎՍԶ, 234):

2.1.2. Երկրորդ՝ Ա + Ե կաղապարի բայեր՝ *գալ-կանգնել, գալ-վայելել, գալ-բերել, գնալ-բերել, գնալ-նստել, գնալ-քնել, երթալ-որոնել, երթալ-պատկել, Անխոս գալիս-նստում է իմ սեղանի մոտ* (ՎՊԸԵ 1, 185): *... Գոյները կզնգան-կաղմկեն* (ՎՊԸԵ 1, 290): *... Կզնա կսարկի հանդերում...* (ՀՄՀ 1, 122): *... Գնացեք քաղեցեք, ձմեռը մուրաբա կունենաք* (ՀՄՀ 1, 139): *–Անում է՝ ձիդ գնա փնարիք էսրեղ...* (ՀՄՀ 1, 374): *... Մի գարշահոյր սպեղանու հովացնելն են զգում-հանդուրժում ...* (ՎՍԶ, 210):

Վերոնշյալ օրինակներից երևում է, որ *ա* լծորդության բայերից այլ բայերի հետ մեծ մասամբ հարադրվում են *գնալ* բայի ձևերը:

2.1.3. Երրորդ՝ Ե + Ա կաղապարի բայեր՝ *վազել-գալ, վազել-գնալ, գրել-կարդալ, քշել-գալ, փքնել-ջանալ, սպրել-զգալ*: *Նա էլ քոչեց-գնաց քաղաք* (ՎՊԸԵ 1, 207): *Արևը պասպանձված կանգնեց-մնաց* (ՎՍԶ, 100): *Հարյուր ռուբլի ծախսեք գնար...* (ՎՍԶ, 194):

2.1.4. Չորրորդ՝ Ե + Ե կաղապարի բայեր՝ *բերել-կապել, սեղմել-փեղափորել, կրրել-զցել, հանել-չարրել, քշել-բերել, պոկել-չարրել, ուրել-խմել, ասել-խոսել, խառնել-խձձել, կապել-կաշկանդել, շաչել-շառաչել, սրբել-ավելել, պահել-շահել, վարել-ցանել, կարել-կապել, ծախել-ծախծխել (և նմանատիպ բազմապարկականներ), թոշնել-թառամել, պատկել-քնել, աղաչել-խնդրել, բացել-փռել, քերել-ջնջել*: *Գիշերվա կեսին ամեն ինչ լռեց-դադարեց* (ԱԱԵ, 119): *Սերը անշարժություն է, կանգնած-հուրած ջուր է...* (ԱԱԵ, 125): *Ուզում են կեսը կրրեն-չարրեն* (ՎՊԸԵ 1, 79): *... Արդագրել-ուղարկել է ընկերս* (ՎՊԸԵ 1, 154): *Դուք նայեք-ջուրեք* (ՎՊԸԵ 1, 174): *... Փակում-բացում էին մեր ավրոբուսի դռները* (ՎՊԸԵ 1, 573): *Հորինում-սարքում են այդ կյանքը* (ՎՊԸԵ 1, 574): *... Տղաները մի քանի նախադասություն էին մրածել-քննարկել* (ՎՊԸԵ 2, 31): *... Նրան կգրկի-կշոյի Մարեն* (ՎՊԸԵ, 90): *... Միրունը, սրա նորահարսը կանգնել նայում էին, թե ինչ է անում...* (ՀՄՀ 2, 9): *Թող իրար կորորեն-թալանեն՝ իր գործը չի* (ՎՍԶ, 46): *... Ու բացարթում-ներշնչում էր մրավորականի կյանքի հմայքը* (ՎՍԶ, 256):

2.2. Զուգաբայական հարադրություններ, որոնց առաջին բաղադրիչը՝ պարզ (աններածանց), երկրորդ բաղադրիչը անանցավոր (ներածանցավոր) բայ է:

2.2.1. Առաջին՝ Ա + Ա կաղապարի բայեր՝ *գնալ-հեռանալ, գալ-մուրենալ, գնալ-մուրենալ, գալ-կենտրոնանալ*:Մեր տախտակը գնում է արևմուտք և արևելքից **գալիս-միանում** (ՀՄՀ 1, 359):Ճիշտը տուն **գնալ-դառնալն է** (ՎՍՁ, 29):

2.2.2. Երկրորդ՝ Ա + Ե կաղապարի բայեր՝ *գնալ-հասնել, գալ-տեղավորվել, գալ-խառնվել, գալ-գողանալ, գալ-տեսնել, գալ-վերցնել, գալ-առնել, գալ-ընկնել, գալ-կորչել*:**Գնում-հասնում է** Ղարաշային (ՎՊԸԵ 1, 156):**Մնաց-հաստատվեց** Երևանում (ՎՊԸԵ 1, 196): *-Կհասցնե՞ք կարդալ-վերջացնել* (ՎՊԸԵ 1, 257): *Սպիտակ ոտքը երևում-կորչում էր*.... (ՀՄՀ 1, 54): **Գնաց կենտրոնների ջրմուղներում կորավ** (ՀՄՀ 2, 46):

2.2.3. Երրորդ՝ Ե + Ա կաղապարի բայեր՝ *ցամաքել-չորանալ, աճել-գորանալ, սպչել-զարմանալ*: *Բայց իր հոգում մարել-մոխրացել էր* մի բան (ՎՊԸԵ 1, 69), *Կյանքիս մի օրն էլ մթնեց-վերջացավ* (ՎՊԸԵ 1, 187): *Աշուրիկը հիմա երևի հրձվում-սքանչանում է* (ՎՊԸԵ 1, 190): *Երեսով մեկ ամբողջ պեպենը կարմրեց-սևացավ* (ՀՄՀ 2, 61): *Զգայարանները թմրում-խլանում են* (ՎՍՁ, 179): *Իմ պարագային նրա լսած-խնացած սուրբ դուրս եկավ* (ՎՍՁ, 252): *Թող կյանքիցս ինձ էս ուշ մթնող-շուր լուսացող օրերը մնան* (ՎՍՁ, 261):

2.2.4. Չորրորդ՝ Ե + Ե կաղապարի բայեր՝ *բերել-հասցնել, քշել-տանել, ցանել-պրծնել, ասել-վերջացնել, քնել-ելնել, կտրել-իջնել, կտրել-անցնել, վազել-հասնել, վազել-ընկնել, բռնել-տանել, ուրել-պրծնել, մաշկել-վերջացնել*: *Խոսքերն ասես ձեռքի ասիով առաջ մղեց-մուրեցրեց* Բոգդանի քնար դեմքին (ԱԱԵ, 112): *Այս նախադասությունը մարդիկ սովորաբար ասում են վիճել-վերջացնելուց հետո* (ՎՊԸԵ 1, 88): *Հայացքով նա որոնեց-գրավ* երրորդ սեղանը (ՎՊԸԵ 1, 150): *Տարիկների հետ պայտովա թոռներն էլ մաքուր են մրնում,*, ուզում *փչել-հանգցնել* վառվող մոմերը (ՎՊԸԵ 46):....**Կարգավորեց սիրունացրեց** իր վրանը (ՀՄՀ 1, 135):....Արգարիս **քաշեցի դրի** տակս.... (ՀՄՀ 1, 466): *-Դու պատավել մեռել ես* (ՀՄՀ 2, 229): *Դու կավիճով վրան գրում անցնում ես* առաջ (ՎՍՁ, 58):Հիշողությունն է մրակորույսի ցանցառությամբ **բերում-տանում** բույրի ծվեններ (ՎՍՁ, 304):

2.3. Զուգաբայական հարադրություններ, որոնց առաջին բաղադրիչը՝ անանցավոր (ներածանցավոր), երկրորդ բաղադրիչը պարզ (աններածանց) բայ է:

2.3.1. Առաջին՝ Ա + Ա կաղապարի բայեր՝ *քարանալ-մնալ, վեր կենալ-գնալ*: ...Արմինուար էլի **քարանուն-մնում էր** շար անպարեհ տեղում (ԱԱԵ, 258): ...Պասպ **վերջացել-գնացել է** ուրիշ մի աշխարհ (ՎՊԸԵ 1, 277): ...Մի բուսե **քարացանք մնացինք**... (ՀՄՀ 2, 152):

2.3.2. Երկրորդ՝ Ա + Ե կաղապարի բայեր՝ *գոլորշիանալ-ցնդել, գար-մանալ-սլշել, վեր կենալ-նարել*²²: Ինքը պիրի կարողանա **դիմանալ-սարել** (ՎՊԸԵ 1, 173): Երկու կողմերում **քարացած-կանգնած էին** կիպարիսների շարքերը (ՎՊԸԵ 1, 575): ...Արյունը **խենթացավ-փրփրեց** ու ջահեղացավ (ՎՊԸԵ, 123):...*Իրենց իմացած-ճամփած* փղամարդկանց եր չսրացան (ՎՍՁ, 264): ...Թե՞ նոր **պիրի սրանա-խախ**... (ՎՍՁ, 299):

2.3.3. Երրորդ՝ Ե + Ա կաղապարի բայեր՝ *թռչել-գնալ, հասնել-գալ, փախչել-գնալ, անցնել-գալ, ելնել-գալ, ելնել-գնալ, առնել-գալ*: ...**Անցած-գնացած** օրերի մի սպի էր թվում (ՎՊԸԵ 1, 9): -Ես **կիախչեմ-կգնամ** քնից (ՎՊԸԵ 1, 44): ...Նա **իջավ գնաց** (ՎՊԸԵ 1, 137): -Որտեղի՞ց **է անցել-մնացել քո այդ գիծն իմ մեջ** (ՎՊԸԵ 1, 175): ...Դեմքը **մեխվել-մնացել է** իմ ներքում (ՎՊԸԵ 1, 223): *Ինչ-որ մեկը* **հագել-գնացել էր** (ՎՊԸԵ 1, 242): ...-Սուրճը **դար աղա** (ՎՊԸԵ 1, 246): ...Նրանց հառաչանքն **արձագանքվեց-մնաց** մեր երգերի մեջ (ՎՊԸԵ, 5): -Դոշոյանը **կթողնի-կգնա**, քեռի՛ (ՀՄՀ 1, 297): Բայց քանի որ **անում-չէր գնում**, քան շունչը քասնապարիկ ծանրանում էր (ՎՍՁ, 14):...Միայն թե մեկը մյուսի հետևից **չփախչեն գնան**... (ՎՍՁ, 168):

2.3.4. Չորրորդ՝ Ե + Ե կաղապարի բայեր՝ *ելնել-կանգնել, գրնել-բերել, ընկնել-կանգնել, առնել-ծախել, քաննել-բերել, հագնել-կապել, առնել-բերել, ուռչել-կապել*: Կարվի պես **քաննում-բերում է** (ԱԱԵ, 55): ...Իջեցրեց քախարակամածին, **իջեցրեց-դուրեց** (ԱԱԵ, 89): Մենք **մոլորված-շվարած** քնկվեցինք նրա գլխավերևում (ՎՊԸԵ 1, 174): ...**Առանձնացրել-կապել էի** գրքերս (ՎՊԸԵ 1, 194): Միայն մի պարկեր **դրոշմվել-սարում է** մեջս (ՎՊԸԵ 1, 210): Ո՞ր քաղաքացու **հագած-կապած** երեխային է տեսել ու նախանձել (ՀՄՀ 1, 292): ...Ձեռքը բռնած երեք քարի **քաննում բերում էր** (ՀՄՀ 2, 35): Նրա դեմքը իր իսկ մրբերից **վառվում-մարում էր** (ՎՍՁ, 15), ...Օրումեջ **կողացնեմ-կքերեմ**... (ՎՍՁ, 23): ...Հինգ քարին մեկ **վերարնվում-պահպանում էր** իր վարորդական իրավունքը... (ՎՍՁ, 124): ...**Թռչում-թառում է** ուղիղ Հայկական պարի ուսերին (ՎՍՁ, 195):

²² Հմմտ. հետևյալ օրինակը. «Է՛ս ինչ օյինբազություն է, վերեք նարեք հացի» (ՎՍՁ, 6): **Վերեք** ձևը **վեր կացեք** հրամայականի ամփոփումն է (հասլոլոգիա), բարբառային ձևը:

2.4. Զուգաբայական հարադրություններ, որոնց երկու բաղադրիչներն էլ ածանցավոր (ներածանցավոր) բայեր են:

2.4.1. Առաջին՝ Ա + Ա կաղապարի բայեր՝ *բարկանալ-գայրանալ*: ...Տնեցիների **զարմացած-վախեցած** հայացքների փակ ներքև իջավ (ՎՊԸԵ 1, 35): **-Կեծանաս-կիմանաս** (ՎՊԸԵ 1, 281):

2.4.2. Երկրորդ՝ Ա + Ե կաղապարի բայեր՝ *վեր կենալ-լեռնել, վեր կենալ-փախչել, բարձրանալ-իջնել, բարձրանալ-հասնել*: ...Ուրքերը համերաշխ **բարձրանում-իջնում էին** (ՎՊԸԵ, 79): **-Կհիվանդանա-կմեռնի**, մերածեց փղան (ՀՄՀ 1, 267): ...**Մեծացել այլանդակվել ենք**... (ՀՄՀ 1, 700): ...Այնպեղ փառերը **փռշխանում թափվում են** ցած (ՎՍՁ, 58):

2.4.3. Երրորդ՝ Ե + Ա կաղապարի բայեր՝ *անցնել-հեռանալ, անցնել-դառնալ, թռչել-սլանալ, չքվել-անհետանալ, ծնվել-մեծանալ, սրվել-բթանալ*, ...**Սառեց-անշարժացավ** առավոտվա փաղփուկը (ԱԱԵ, 114): ...Տարջուրը **թափվել-վերջացել էր** (ՎՊԸԵ 1, 34): ...Մի հազար անգամ **իջել-բարձրացել էր** Աբուլյանով (ՎՊԸԵ 1, 49): Այրված անփառ, վաղուց **հանգած-մոխրացած** (ՎՊԸԵ, 57): ...Աղգյոլից **թողնում-հեռանում են** բոլոր հայերը... (ՎՊԸԵ, 130):

2.4.4. Չորրորդ՝ Ե + Ե կաղապարի բայեր՝ *ընկնել-մեռնել, փախչել-թաքնվել, թողնել-անցնել, մեռնել-սրծնել, մրնել-լեռնել, թռչել-կորչել, թռչել-հասնել, փախչել-սրծնել, առնել-թռչել, առնել-փանել, վերցնել-փանել, փանել-նսրեցնել, զուգվել-զարդարվել, ուռչել-փքվել, լցվել-թափվել, գլորվել-ջարդվել, պոկվել-ընկնել*: Ու շարթթ օրը Մկրտիչները, **զուգված-զարդարված**, երկու ֆայտոնով, Մկոյին ու Լյուբային փարան գազս (ԱԱԵ, 21): ...Նրա գլուխը **ընկել-խրվել էր** մորուքի մեջ (ԱԱԵ, 117): ...Սրով պափին **էր կայցրած-դաջված** Դեմեստրենեսը (ԱԱԵ, 253): Մեքենաներից փղամարդիկ **իջել-խմբվել էին** (ՎՊԸԵ 1, 201): Գորուրը **փախչում-կորչում է** փերենների մեջ (ՎՊԸԵ 1, 279): **-Էս ոչխարի փերն ո՞վ է, ցրվում կորչում է**... (ՀՄՀ 2, 47):

Երկու ածանցավոր բայերով զուգաբայական հարադրություններին վերաբերող հասվածը հարկ է լրացնել մի դիտարկումով ևս: Զուգադրվող բայերի ածանցները կարող են լինել՝

ա) նույնը՝ *բարկանալ-գայրանալ, անցնել-դառնալ, առնել-փանել, թողնել-անցնել, մեռնել-սրծնել, թռչել-կորչել, զուգվել-զարդարվել, գլորվել-ջարդվել, բացվել-փակվել*:

բ) տարբեր՝ *չքվել-անհետանալ, ծնվել-մեծանալ, սրվել-բթանալ, ընկնել-կոտրվել, փախչել-թաքնվել, վերցնել-փանել, փանել-նսրեցնել, ուռչել-փքվել, ուռչել-մեծանալ, պոկվել-ընկնել*:

Մրա մի տարատեսակը պետք է համարել այն դեպքերը, երբ զուգաբայերում առկա են նույն տեսակի, բայց տարբեր ածանցներ (օրինակ՝ տոսկածանցների խմբի տարբեր ածանցներ), ինչպես՝ *վեր կենսալ-լրեսնել, վեր կենսալ-փախել, բարձրանալ-իջնել, բարձրանալ-հասնել, անցնել-հեռանալ, թռչել-վանալ, առնել-թռչել, կորչել-անհետանալ, ելնել-բարձրանալ, թողնել-հեռանալ, թռչել-անցնել, թռչել-հասնել*:

Պետք է նկատի ունենալ մի քանի կարևոր հանգամանք ևս.

ա/ հնարավոր են բազմապատկական բայերի զուգորդումներ, որոնցից մեկը ածանցավոր է, մյուսը՝ պարզ (աններածանց)՝ արմատի կրկնությամբ կազմված (բայց երկուսն էլ բազմապատկական կերպի), ինչպես՝ *պոկոպել-թափթիել*.

բ/ նմանապես հնարավոր են նաև տարբեր կազմության պատճառակաճ բայերի (պատճառական կերպի) համադրություններ՝ թե՛ *-ցն* ածանցավոր, թե՛ *լրալ* բայով հարադրված բայերի զուգորդումներ, ինչպես՝ *բերել րալ-փակցնել*²³:

գ/ հնարավոր են նաև տարբեր կերպերի բայերի համադրություններ, ինչպես՝ 1/ պարզ և բազմապատկական՝ *պոկել- թափոպել, ջարդել- փշրոպել, քանդոպել-թափել*, 2/ պարզ և պատճառական՝ *կարդալ-հասկացնել*:

3. Զուգաբայական հարադրությունները՝ ըստ բաղադրիչների կանոնականության (կանոնավորության և անկանոնության)

Զուգաբայական հարադրությունները այս սկզբունքով դասակարգելիս հնարավոր է չորս կադապար:

3.1. Զուգաբայական հարադրություններ, որոնց երկու բաղադրիչներն էլ կանոնավոր բայեր են: Այս դեպքում նույնպես դասակարգումը ենթաշերտերով է՝ հաշվի առնելով ըստ լծորդությունների դասակարգումը:

3.1.1. Առաջին՝ Ա + Ա կադապարի բայեր՝ *գնալ-հեռանալ, քարանալ-մնալ, գնալ-մոպենալ, բարկանալ-գայրանալ, գոռալ-ձչալ, եռալ-զեռալ*,

²³ Նկատվել է, որ զուտ պատճառական բայերի հարադրությամբ, նրանց կազմությանը և իմաստով պայմանավորված, զուգադրական բայեր սովորաբար չեն կազմվում (տե՛ս Մարգարյան Ա. Ս., նշվ. աշխ, էջ 343):

խղճալ-գթալ:Սողում գնում էին իրենց համար (ՎՍՁ, 31):Դարբնոցը գնալու-մնալու րեղ չուներ (ՎՊԸԵ 1, 196):

3.1.2. Երկրորդ՝ Ա + Ե կաղապարի բայեր՝ գնալ-կանգնել, գնալ-հասնել, գնալ-նստել, գնալ-քնել, երթալ-որոնել, երթալ-սլաղել, բարձրանալ-իջնել, գոլորշիանալ-ցնդել: Ե՞րբ մեր հին արյունը **խենթացալ-փրփրեց** ու ջահելացալ (ՎՊԸԵ, 123): Նորից կապրեն գոյները, **կզնգան-կաղմկեն** (ՎՊԸԵ 1, 290):**Գնում ձուլվում են** չորս միլիարդ անդամ զանգվածին (ՎՍՁ, 75):

3.1.3. Երրորդ՝ Ե + Ա կաղապարի բայեր՝ թռչել-գնալ, հասնել-գնալ, վազել-գնալ, ցամաքել-չորանալ, գրել-կարդալ, աճել-գորանալ, թռչել-սլանալ, սաշել-զարմանալ, չքվել-անհետանալ, փքնել-ջանալ, սալել-զգալ, աճել-գորանալ, սրվել-բթանալ: Կյանքիս մի օրն էլ **մթնեց-վերջացալ** (ՎՊԸԵ 1, 187): Ահա մի քանի րոդ՝ **խզնզված փչացած** գրչածայրով.... (ՎՊԸԵ 1, 30):Ու **գրնեն ուրախանան** էլ....(ՀՄՀ 2, 36):Մեքենան **կափարեղագործվում-չբեղանում**, նոր, ավելի բարձր գին էր ունենում (ՎՍՁ, 124): Սկզբում **այրված-մերկացած ծառ թվաց**.... (ԱԱԵ, 133):

3.1.4. Չորրորդ՝ Ե + Ե կաղապարի բայեր՝ ընկնել-կոտրվել, սեղմել-րեղավորել, խփել-ծակել, կտրել-զցել, պոկել-շարքել, փախչել-թաքնվել, հանձնել-վերջացնել, խառնել-խճճել, վարել-ցանել, ծախել-ծախծխել, թռչնել-թառամել, թռչել-անցնել, վազել-ընկնել, փախչել-սլաղնել, աղաչել-խնդրել, բացել²⁴-փռել, բացել-փակել, խոսել-զրուցել, փրկել-ազատել, լցվել-թափվել, ծել-ծաղկել, պոկվել-ընկնել, բացվել-փակվել, մաշկել-վերջացնել, ցանել-ավարել:**Կծեց-քշեց** իր րեղն զբաղեցրած քուռակին (ՀՄՀ 1, 59): Առաջին ցավից գառնուկը **շմեց-մայեց**.... (ՎՍՁ, 15):Չոված աչքերով նա **ըմբռնում-սովորում է** կաթի հաստարուն ձերմակությունը (ՎՍՁ, 19): Արյունը հյուրերի մոտ չեն բռնում, **ծծվում կորչում է** (ՀՄՀ 2, 13): Մի ակնթարթում կծեփվեին հողմապակուն **ծեփվող-շարքվող** կաթիլի նման.... (ՎՍՁ, 137): Կոճակը նրա համար է, որ **ընկնի-կորչի** (ՎՍՁ, 178):

3.2. Զուգաբայական հարադրություններ, որոնց առաջին բաղադրիչը՝ կանոնավոր, երկրորդը՝ անկանոն բայ է:

3.2.1. Առաջին՝ Ա + Ա կաղապարի բայեր՝ գնալ-գալ:Իսկ մտորումները երևի անթիվ էին ու հազար անգամ նույն թելի վրա **գնում-գալիս էին** նույն կորիզները (ՎՊԸԵ, 48): Ըիշտը րուն **գնալ-դառնալն է** (ՎՍՁ, 29):

²⁴ Բացել բայը ոմանք դասում են անկանոնների շարքում, մինչդեռ այն բանալ բայի վաղակատար դերբայից առաջացած ձև է, որը գիտակցվում է որպես անորոշ դերբայ և խոնարհվում է կանոնավոր կերպով:

3.2.2. Երկրորդ՝ Ա + Ե կաղապարի բայեր՝ *գնալ-առնել, գնալ-բերել, գնալ-տեսնել*: -*Դու հեռախոսը դիր, իմանամ-ասեմ* (ՎՊԸԵ 1, 207): *Ինքը գնաց տեսավ խոտը մի քիչ հավաքած է...* (ՀՄՀ 1, 120): -*Գնամ-ասեմ Մանուշին* (ՎՊԸԵ 1, 281): -*Գնանք բերենք*, -կարմիր լուսավորված մեր սենյակում ասաց հայրս (ՀՄՀ 1, 44):*Սպիտակ խալաթավոր կինը գնաց բացեց լուսավոր մեքենայի դուռը* (ՀՄՀ 1, 282):

3.2.3. Երրորդ՝ Ե + Ա կաղապարի բայեր՝ *փախչել-գալ, վազել-գալ, անցնել-գալ, անցնել-դառնալ, քշել-գալ, քշել-տանել*:*Իրենք չհիշեին-չտեսին* (ՎՊԸԵ 1, 121): *Դու արդեն գիտեիր, հանում-տալիս էիր* (ՎՊԸԵ 1, 160): *Քարածայրերի մեջքը կծակեն-դուրս կգան* մեր զայված աղբյուրները (ՎՊԸԵ, 6): *Տարան հանեց ցույց տվեց դաստիարակ* (ԱԱԵ, 52): *Լյարդի գույր կեսը կտրեց տվեց կարմիր գեղիտեղիին* (ՀՄՀ 2, 13):

3.2.4. Չորրորդ՝ Ե + Ե կաղապարի բայեր՝ *գրնել-բերել, պոկել-տանել, քշել-տանել, քշել-բերել, քնել-ելնել, մրնել-տեսնել, բռնել-տանել, վերցնել-տանել*:*Կոնստանտին* այս անունները (ՎՊԸԵ, 136): *Թանձր խալաթի փեշը ծածկում-բացում էր ծունկը...* (ՀՄՀ 1, 126): -*Վաղը ճարեմ-բերեմ* (ՎՊԸԵ 1, 219):*Ծալեց դրեց թարեքին* (ՀՄՀ 2, 12): *Ջանդաղ էրքան մեկ-մեկ խտրել դրել է ձիուն* (ՀՄՀ 2, 16): *Նրա բարձր պարզգամներին նայել տեսել էր* Համբո հորեղբայրը (ՀՄՀ 2, 42):*Մեր ոչխարը կտրեցին տարան...* (ՀՄՀ 2, 44):*Ընկած տերևը սրբում տանում են* աղբի նման (ՎՍԶ, 249):*Խփում էր... ընկնել-ելնելով* ու անհավասար (ՀՄՀ 1, 335):*Իսկ մտնող-ելնող* հարկ է համարել ձեռագիրը գնահատել տարօրինակ (ՎՍԶ, 301):

3.3. Ջուգաբայական հարադրություններ, որոնց առաջին բաղադրիչը՝ անկանոն, երկրորդը կանոնավոր բայ է:

3.3.1. Առաջին՝ Ա + Ա կաղապարի բայեր՝ *լալ-սգալ, գալ-կենտրոնանալ, գալ-մոտենալ*: -*Գնա դարձիր խոզարած* (ՀՄՀ 1, 171):

3.3.2. Երկրորդ՝ Ա + Ե կաղապարի բայեր՝ *գալ-տեղավորվել, գալ-խառնվել, գալ-ծածկել, գալ-հսկել, գալ-վայելել, գալ-վերցնել, վեր կենալ-փախչել*: Անխոս *գալիս-նայում է* իմ սեղանի մոտ (ՎՊԸԵ 1, 185):*Իրենք թող գան պահեն էլ...* (ՀՄՀ 2, 36): *Ճեպրնթացը տալու-անցնելու էր* առանց թափը կտրելու... (ՎՍԶ, 51):*Աղվեսը գար պազեր* հեռվում (ՀՄՀ 1, 150):*Գալիս ձեռքում էր* դեռ քաղաքի տանիքներին նայած ամպերի մոթ զանգվածը... (ՎՍԶ, 195): *Նրանք երբեմն բոլորը միասին գալիս լցվում էին* փոքրիկ սենյակը (ԱԱԵ, 46):*Բոլորը ձեռք տան անցնեն* (ՎՊԸԵ, 103): *Հարսանիքները գալու անցնելու են* (ՀՄՀ 1, 259):*Լավագույն մասով գալիս հունցվում է* մեր լեզվի մեջ (ՀՄՀ 1, 333):

3.3.3. Երրորդ՝ Ե + Ա կաղապարի բայեր՝ *եյնել-գնալ, առնել-գնալ, թողնել-հեռանալ*: Կամաց-կամաց Աղգյոլից **թողնում-հեռանում են** բոլոր հայերը (ՎՊԸԷ, 130): ...Հեպո **թողել գնացել է** (ՎՊԸԵ 1, 234):

3.3.4. Չորրորդ՝ Ե + Ե կաղապարի բայեր՝ *բերել-կանգնեցնել, բերել-հասցնել, ելնել-բազմել, ասել-վերջացնել, ասել-պատմել, առնել-ծախել, թողնել-անցնել, առնել-փախչել, առնել-թռչել, փանել-նստեցնել, ուրել-պրծնել*: Շուշանիկը հյուսերը **բերում-հավաքում էր** իր մարմինն... (ԱԱԵ, 314): Սուիին ու նորամանուկը շալը **բերել իրոք գցել էին** ուսերին... (ՀՄՀ 2, 54): Վերջին անգամ **բացեց-ծածկեց** բոլոր սենյակների դռները (ՎՊԸԵ 2, 71): ...Ո՞նց **փանեմ փնկեմ** մեհյանի փակի խորանի փակ (ՀՄՀ 1, 350): Մեզ բրոջ կողքին **էր դրել թաղել** (ՀՄՀ 2, 61): ...Մի քանի օրինակ **փանում-բաժանում էր** հարևաններին (ՎՍՁ, 125): Ձեռքը թաքուն ու բացել-բաց **փարել-հասցրել էր** Եվայի կրծքի փակ (ԱԱԵ, 39): - Շո՛ւր, **փար հագցրու** (ՎՊԸԵ 1, 31):

3.4. Ջուգաբայական հարադրություններ, որոնց երկու բաղադարիչներն էլ անկանոն բայեր են:

3.4.1. Առաջին՝ Ա + Ա կաղապարի բայեր՝ *վեր կենալ-գալ*: ...Ի՞նչ կլի-նի՞ Գիրս կարդաս, Վեր կենաս գաս...

3.4.2. Երկրորդ՝ Ա + Ե կաղապարի բայեր՝ *գալ-դեսնել, գալ-ասել, գալ-բերել, վեր կենալ-դեսնել*: Թիթեռը **թնկն փվեց ելավ** (ՎՍՁ, 56):

3.4.3. Երրորդ՝ Ե + Ա կաղապարի բայեր՝ *եյնել-գալ, առնել-գալ*: ...**Թողեց դուրս եկավ** գետից (ԱԱԵ, 264):

3.4.4. Չորրորդ՝ Ե + Ե կաղապարի բայեր՝ *փանել-բերել, առնել-ուրել, առնել-բերել, առնել-փանել*: Եվ միայն բույրի հիշողությունն է մրակորույսի ցանցառությանը **բերում-փանում** բույրի ծվեններ... (ՎՍՁ, 304): ...Ջբաղվում է փիղմ ու ավազ **բերել-փանելով**... (ՎՍՁ, 19): ...Ավրոն մեզ դպրոց **է փանելու-բերելու** (ՎՍՁ, 78): Տեսնես ինչո՞ւ են...սպահեսպները **փանում դնում** գետերի ափին (ՎՍՁ, 46):

Եզրակացություններ

Ջուգաբայական հարադրությունների կաղապարների քննությունից կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին:

1. Եթե նույնիսկ նկատի չառնվեն ազատ (փոխարկելի) հարադրությունները, որոնք կայուն բառայինների նշանակություն չունեն, բառարաններում չեն վկայվում, և քննվեն միայն բառարաններում առկա կայուն

հարադրությունները, այնուամենայնիվ, դրանք բնութագրելու ավանդական մոտեցումները բավարար չեն:

Ուստի, հաշվի առնելով վերոբերյալ կաղապարների հնարավոր համադրությունները՝ առաջարկվում են զուգաբայական հարադրությունների հետևյալ բնորոշումները (բնութագրումները).

ա) տարբեր լծորդության բայերը կարելի է կոչել **տարալծորդ** բայեր, ինչպես՝ *գրել-կարդալ*.

բ) տարբեր կազմության (պարզ և ներածանցավոր) բայերը կարելի է կոչել **տարակազմ**, ինչպես՝ *գնալ-կորչել, փանել-բերել*.

գ) եթե զուգաբայական հարադրության բայերն ունեն տարբեր սեռեր, նման բայերը կարելի է կոչել **տարասեռ**, ինչպես՝ *լինել-գարմանալ*.

դ) եթե բայերից մեկը կանոնավոր է, մյուսը՝ անկանոն, նման բայերը կկոչվեն **տարականոն**, ինչպես՝ *ելնել-իջնել, առնել-կորչել*.

ե) եթե զուգաբայական հարադրության բայերն ունեն տարբեր անձանցներ, դրանք կկոչվեն **տարածանց**, ինչպես՝ *ծնվել-մեծանալ, փանել-կորցնել*.

զ) եթե զուգաբայական հարադրության բայերն ունեն տարբեր կերպեր, դրանք կարելի է կոչել **տարակերպ** բայեր, ինչպես՝ *հանել-թափ-թփել*:

Արեն Մ. Սանթոյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց լեզվի քերականությունը, կետադրությունը, բառակազմությունը, իմաստաբանությունը և բառարանագրությունը: Զբաղվում է հայերենի քերականության և նորմավորման ու անկանոնության հարցերով: Հեղինակ (և համահեղինակ) է բառարանի, մենագրությունների և 40-ից ավելի գիտական հոդվածների:

Էլ. հասցե՝ arenantoyan@mail.ru

Նազիկ Գ. Հովհաննիսյան– գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց լեզվի պատմությունը, բառակազմությունը, իմաստաբանությունը, բառարանագրությունը, հայ բարբառագիտությունը: Հեղինակ է մենագրությունների և 40-ից ավելի գիտական հոդվածների:

Էլ. հասցե՝ instlingv@sci.am

STRUCTURAL FEATURES OF DOUBLE VERBS

Aren M. Santoyan

Candidate of Sciences in Philology

Nazik G. Hovhannisyan

Candidate of Sciences in Philology

Key words- conjugation type, verb formation, mixed, multi-variant, mixed affix, form, component, canonicity, meaning of the word, classification.

Armenian linguists, considering and studying the semantic connections and relationships between the components of double verbs, note that the components of constructions with double verbs can be synonymous verbs (թոշնել-թառամել [t'oshnel- t'aramel] "fade-wither"), verbs with close meanings (ասել-խոսել [asel-khosel] "say-speak"), verbs denoting actions that are combined with each other (ուտել-խմել [utel-khmel] "eat-drink"), verbs that show sequential action (առնել-փախչել [arnel- p'akhchel] "take-run away"), antonym verbs (առնել-ծախել [arnel - tsakhel] "buy-sell") and so on.

In addition to the semantic connection, linguists also paid attention to the verb aspect of the components of constructions with double verbs and their relationship. However, the connections between the actions of components, the composition of components (verb affixes), the aspect category of components, and canonicity, that is, the regularity and irregularity of component verbs, were not taken into account. Meanwhile, these are important questions for a full consideration of double verbs, especially from the point of view of assessing the lexical-semantic meaning of double verbs. In this regard, taking into account possible combinations of these patterns, the article proposes new definitions (characteristics) of constructions with double verbs:

a/ verbs of different conjugation types can be called hetero-conjugated (differently conjugated) verbs, for example: գրել-կարդալ [grel-kardal] "write-read".

b/ verbs of different formations (simple and mid-affixation) can be called heterogeneous, for example: գնալ-կորչել [gnal-korchel] "go-get lost", տանել-բերել [tanel-berel] "carry-bring".

c/ if the constituent pair verbs of a complex verb have different voices, such verbs can be called mixed, for example: տեսնել-զարմանալ [tesnel-zarmanal] "see-be surprised".

d/ if one of the verbs is regular and the other is irregular, then such verbs will be called non-canonical, for example: ելնել-իջնել [yelnel-ijnel] "rise-fall", առնել-կորչել [arnel-korchel] "take-get lost".

e/ if the constituent pair verbs of a complex verb have different affixes, they will be called of mixed affixation, for example: ծնվել-մեծանալ [tsnvel-metsanal] "born-grow", տանել-կորցնել [tanel-kortsnel] "take-lose".

f/ if the constituent pair verbs of a complex verb have different aspects, they can be called multi-aspect, for example: հանել-թափթփել [hanel- t'ap't'p'el] "take out-scatter".

Резюме

СТРУКТУРНЫЕ ОСОБЕННОСТИ ДВОЙНЫХ ГЛАГОЛОВ

Арен М. Сантоян

Кандидат филол. наук

Назик Г. Оганесян

Кандидат филол. наук

Ключевые слова - тип спряжения, образование глаголов, разносоставный, разновариантный, разноаффиксный, форма, компонент, каноничность, значение слова, классификация.

Армянские лингвисты, рассматривая и изучая семантические связи и взаимоотношения компонентов двойных глаголов, отмечают, что компонентами конструкций с двойными глаголами могут быть синонимичные глаголы (թռչնել-թառախել [t'oshnel- t'aramel] «сохнуть-завянуть»), глаголы близкого значения (սուել-խոսել [asel-khose] «говорить-сказать»), глаголы, обозначающие действия, сочетающиеся друг с другом (ուտել-խմել [utel-khmel] «есть-пить»), глаголы, которые показывают последовательное действие (սնել-փախչել [arnel- p'akhchel] «взять-убежать»), глаголы-антонимы (սնել-ծախել [arnel- tsakhel] «купить-продать») и так далее.

Помимо семантической связи, лингвисты обращали внимание также на глагольный род компонентов конструкций с двойными глаголами и их

взаимоотношения. Однако не учитывались связи между действиями компонентов, составом компонентов (аффиксы глаголов), видовой категорией компонентов и каноничностью, то есть правильностью и неправильностью глаголов-компонентов. Между тем, это важные вопросы для полноценного рассмотрения двойных глаголов, особенно с точки зрения оценки лексико-семантического значения двойных глаголов. В связи с этим, учитывая возможные сочетания данных закономерностей, в статье предлагаются новые дефиниции (характеристики) конструкций с двойными глаголами:

а/ глаголы разных типов спряжения можно назвать гетероспряженными (по-разному спрягаемыми) глаголами, например: գրել-կարդալ [grel-kardal] «писать-читать».

б/ глаголы разного образования (простого и среднеаффиксационного) можно назвать разнородными, например: գնալ-կորչել [gnal-korchel] «пойти-пропасть», տանել-բերել [tanel-berel] «нести-принести».

в/ если составляющие парные глаголы сложного глагола имеют разные залого, такие глаголы можно назвать смешанными, например: տեսնել-զարմանալ [tesnel-zarmanal] «увидеть-удивиться».

д/ если один из глаголов правильный, а другой неправильный, то такие глаголы будут называться неканоническими, например: ելնել-իջնել [yelnel-ijnel] «подняться-спуститься», առնել-կորչել [arnel-korchel] «взять-пропасть».

е/ если составляющие парные глаголы сложного глагола имеют разные аффиксы, то они будут называться смешанной аффиксации, например: ծնվել-մեծանալ [tsnvel-metsanal] «родиться-вырасти», տանել-կորցնել [tanel-kortsnel] «нести-потерять».

е/ если составляющие парные глаголы сложного глагола имеют разные аспекты, их можно назвать многоаспектными, например: հանել-թափթփել [hanel-t'ap't'p'el] «вынести -разбросать».

Համառոտագրություններ

ԱԱԵ - Աղասի Ավագյան, Եռանկյունի, Եր., «Սովետական գրող» հրատ., 1983, 456 էջ:

ՎՊԸԵ1 - Վարդգես Պետրոսյան, Ընտիր երկեր 2 հատ., Հատոր 1, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1983, 624 էջ:

ՎՊԸԵ 2 - Վարդգես Պետրոսյան, Ընտիր երկեր 2 հատ., Հատոր 2, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1983, 608 էջ:

ՎՊՀԷ - Վարդգես Պետրոսյան, Հայկական էսթիզներ, Եր., «Հայաստան» հրատ., 1984, 304 էջ:

ՀՄՀ1 – Հրանտ Մաթևոսյան, Հատընտիր, հատ. 1-ին, Եր., «Օգոստոս» հրատ., 2005, 704 էջ:

ՀՄՀ 2 – Հրանտ Մաթևոսյան, Հատընտիր, հատ. 2-րդ, Եր., «Օգոստոս» հրատ., 2005, 701 էջ:

ՎՍԶ – Վանո Սիրադեղյան, Ձեռքդ ետ տար ցավի վրայից, Եր., «Նաիրի» հրատ., 2000, 308 էջ:

Օգտագործված գրականություն

1. Աբրահամյան Ա. Ա., Բայը ժամանակակից հայերենում, Եր., ՀՄՍՈ ԳԱ հրատ., 1962:
2. Աղայան Է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., ԵՊՀ հրատ., 1984:
3. Աճառյան Հ. Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հատ. IV, Ա գիրք, Եր., ՀՄՍՈ ԳԱ հրատ., 1959:
4. Աճառյան Հ. Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հատ. IV, Բ գիրք, Եր., ՀՄՍՈ ԳԱ հրատ., 1961:
5. Այվազյան Ա. Ս., Եռանկյունի, Երևան, «Սովետ. գրող» հրատ., 1983:
6. Այտընեան Ա. Հ., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, հանդերձ ներածութեամբ և յաւելուածով, Վիեննա, Մխիթարեանց տպ., 1866:
7. Առաքելյան Վ. Դ., Հայերենի շարահյուսություն, հատ. 1, Եր., ՀՄՍՈ ԳԱ հրատ., 1958:
8. Բարսեղյան Հ. Խ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., ՀՄՍՈ հեռակա մանկավարժական ինստիտուտի հրատ., 1953:
9. Ղազարյան Ս. Ղ., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., ԵՊՀ հրատ., 1954:
10. Մաթևոսյան Հ. Բ., Հատընտիր, հատ. 1-ին, 2-րդ, Եր., «Օգոստոս» հրատ., 2005:
11. Մարգարյան Ա. Ս., Հայերենի հարադիր բայերը, Եր., ԵՊՀ հրատ., 1966:
12. Չալիխեան Վ. Հ., Քերականութիւն հայկազնեան լեզուի, հանդերձ փոփոխմամբ եւ յաւելուածովք աշխատասիրեալ ի Արսենէ Վ. Այտընեան, Վիեննա, Մխիթարեան տպ., 1885:
13. Պետրոսյան Վ. Հ., Ընտիր երկեր 2 հատորով, հատ. 1, 2, Եր., «Սովետ. գրող» հրատ., 1983:
14. Պետրոսյան Վ. Հ., Հայկական էսքիզներ, Եր., «Հայաստան» հրատ., 1984:
15. Սիրադեղյան Վ. Ս., Ձեռքդ ետ տար ցավի վրայից, Եր., «Նաիրի» հրատ., 2000:
16. Սևակ Գ. Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., ԵՊՀ հրատ., 1955:
17. Մբեղյան Ս. Խ., Հայոց լեզվի տեսություն, Եր., «Մխրթ» հրատ., 1965:

REFERENCES

1. Abeghyan M., Hayots lezvi tesut'yun, Yer., "Mitk'" hrat., 1965 (In Armenian).
2. Abrahamyan A., Bayč zhamanakakits' hayerenum, Yer., HSSR GA hrat., 1962 (In Armenian).
3. Acharyan H., Liakatar k'erakanut'yun hayots' lezvi, hamematut'yamb 562 lezuner, hat. IV, A Girk', Yer., HSSR GA hrat., 1959 (In Armenian).

4. **Acharyan H.**, Liakatar k'erakanut'yun hayots' lezvi, hamematut'yamb 562 lezuneri, hat. IV, B Girk', Yer., HSSR GA hrat., 1961 **(In Armenian)**.
5. **Aghayan Ē. B.**, Ĕndhanur yev haykakan baragitut'yun, Yer., YEPH hrat., 1984 **(In Armenian)**.
6. **Arak'elyan V.**, Hayereni sharahyusut'yun, hat. 1, Yer., HSSR GA hrat., 1958 **(In Armenian)**.
7. **Aytĕnean A.**, K'nnakan k'erakanut'ivn ashkharhabar kam hayerĕn lezui, handerdz neratsuteamb yev yaveluatsov, Vienna, Mkhit'areants tparan, 1866 **(In Armenian)**.
8. **Ayvazyan A. S.**, Yerankyuni, Yer., "Sovet. grogh" hrat., 1983 **(In Armenian)**.
9. **Barseghyan H.**, Ardi hayereni bayi yev khonarhman tesut'yun, Yer., HSSR heraka mankavarzhakan instituti hrat., 1953 **(In Armenian)**.
10. **Ch'alĕnean V.**, K'erakanutivn haykaznean lezui, handerdz p'op'okhmamb yev yaveluatsov k' ashkhatasireal i Arsĕnĕ Aytĕnean, Vienna, Mkhit'arean tparan, 1885 **(In Armenian)**.
11. **Ghazaryan S.**, Hayots lezvi hamarot patmut'yun, Yer., YEPH hrat., 1954 **(In Armenian)**.
12. **Margaryan A.**, Hayereni haradir bayerĕ, Yer., YEPH hrat., 1966 **(In Armenian)**.
13. **Mat'evosyan H. I.**, Hatĕntir, hat.1-2, Yer., "Ogostos" hrat., 2005 **(In Armenian)**.
14. **Petrosyan V. H.**, Ĕntir yerker 2 hatorov, hat.1-2, Yer., "Sovet. grogh" hrat., 1983 **(In Armenian)**.
15. **Petrosyan V. H.**, Haykakan ĕsk'izner, Yer., "Hayastan" hrat., 1984 **(In Armenian)**.
16. **Sewak G.**, Zhamanakakits' hayots' lezvi dasĕnt'ats', Yer., YEPH hrat., 1955 **(In Armenian)**.
17. **Siradeghyan V. S.**, Dzerk'd yet tar tsavi vrayits, Yer., "Nairi" hrat., 2000 **(In Armenian)**.